




CHRISTMAS CAROLING

Please join us for Christmas Caroling on Sunday, December 22, 2024 following church services.



ՅԻՄՆԱԿ / HISNAG / ADVENT

«Յիսնակ»ը յիսուն օրերու միջոց մըն է, որուն կը յաջորդէ Աստուածայայտնութեան տօնը: Ժամանակին, Մեծ Պահքի նման պարտադրուած պահք էր՝ 50 օրերու տեւողութեամբ, բայց այժմ վերածուած է երեք շաբաթապահքերու: Առաջին շաբաթը կը կոչուի «Յիսնակաց Պահք», երկրորդը, որ ձմեռնամուտի պահքն է, կը կոչուի «Ս. Յակոբի Պահք» եւ երրորդը, վերջին շաբաթը՝ «Ս. Ծննդեան Պահք»:

Յունուար 6-էն ետ հաշուելով 50 օր, կը յանդինք Նոյեմբեր 18-ին. անոր մօտիկ կիրակին ալ կ'ըլլայ Յիսնակի Բարեկենդանը:

This is a period of fifty days, which precedes Theophany, and formerly, as Great Lent, constituted a period of total fasting. At present, aside from the usual Wednesday and Friday fasts, it consists of fasting for three weeks: the first week under the designation, *Hisnagatz Bahk* (Quinquagesima or Advent); the second week, the fast of the arrival of the winter, is known as the Fast of St. James; and the last week, the Christmas fast.


Counting backwards fifty days from January 6 brings us to November 18, the nearest Sunday being *Hisnagatz Paregentan* which with an immovability of seven days, may fall on any day between November 15 and 21.



Next Saturday, December 14 is the Feast day of Soorp Hagop (St. James)

Ս. ԽԱՉ ՀԱՅՅ. ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
SOORP KHATCH ARMENIAN
APOSTOLIC CHURCH

☞ SUNDAY, DECEMBER 8, 2024 ☞



ՉԱՅՆ ԳՁ
ՅԻՄՆԱԿԻ Գ. ԿԻՐԱԿԻ
THIRD SUNDAY OF ADVENT

ՀԱՄԱՍՏԵՂ ՀԱՅ ԴՊՐՈՑԻ
ՅԱՏՈՒԿ ԺԱՍԵՐԳՈՒԹԻԻՆ 9:30-ԻՆ
SPECIAL SERVICE FOR

HAMASDEGH ARMENIAN SCHOOL 9:30 a.m.

Ս. Պատարագ Առ. Ժամը 10:30-ին հեռարձակում
Divine Liturgy 10:30 a.m. Live Streamed

Soorp Khatch Armenian Apostolic Church
4906 Flint Drive, Bethesda, MD 20816
Office Hours: 10:00 a.m-2:00 p.m.
Phone: (301) 229-8742; Fax: (301) 229-9393
E-mail: soorpkhatch@verizon.net
Web Page: www.soorpkhatch.org
Archpriest Fr. Sarkis Aktavoukian, Pastor
Home Phone: (301) 977-1863; Cell: (301) 787-5506

DER VOGHORMIA

All Sick



Parishioners

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԹԵՍԱԼՈՆԻԿԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԴ ՆԱՄԱԿԷՆ
----- (1 . 3 - 10) -----

 **SCRIPTURE READINGS** 
II THESSALONIANS 1:3-10

Եղբայրներ, պարտք կը զգանք եւ արդար կը գտնենք ձեզի համար միշտ գոհութիւն յայտնել Աստուծոյ, որովհետեւ ձեր հաւատքը հետզհետէ աւելի կ'աճի եւ ձեզմէ իւրաքանչիւրին սէրը իրարու հանդէպ աւելի կը խորանայ: Աստուծոյ եկեղեցիներուն մէջ մենք կը պարծենանք ձեզմով, այն համբերութեան եւ հաւատքին համար, որ դուք ցուցաբերեցիք ձեր կրած բոլոր հալածանքներուն եւ նեղութիւններուն մէջ:

Ձեր համբերութիւնն ու հաւատքը ապացոյցը պիտի ըլլան Աստուծոյ արդար դատաստանին, որովհետեւ դուք արժանի պիտի ըլլաք Աստուծոյ արքայութեան, որուն համար այդքան կը տանջուիք: Արդարեւ, Աստուծոյ համար արդարութիւն պիտի ըլլայ ձեզ չարչարողները տանջանքով պատժել, իսկ ձեզի՝ տանջուածներուդ, հանգիստ պարգեւել մեզի հետ միասին, երբ մեր Տէրը Յիսուս հրեշտակներու իր բանակով երկինքէն յայտնուի: Անիկա բոցավառ կրակով պիտի պատժէ անոնք՝ որոնք կը մերժեն զԱստուած ճանչնալ եւ հնազանդիլ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Աւետարանին: Այն օրը, այդպիսիները յաւիտենական մահուամբ պիտի պատժուին, զրկուելով Տիրոջ ներկայութենէն եւ անոր փառաւոր զօրութենէն, երբ անիկա գայ իր սուրբերուն մէջ փառաւորուելու եւ բոլոր իրեն հաւատացողներուն հիացումին առարկան ըլլալու:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ - (14 . 12 – 15) -

Ապա Յիսուս տանտիրոջ ըսաւ.

- Երբ ճաշի կամ ընթրիքի հրաւէր կու տաս, մի՛ կանչեր բարեկամներդ կամ եղբայրներդ, ազգականներդ եւ հարուստ դրացիներդ, որպէսզի չըլլայ որ անոնք ալ քու հրաւէրիդ փոխարէն քեզ հրաւիրեն, եւ այս ձեւով քեզի հատուցում կատարած ըլլան: Ընդհակառակը, երբ ճաշկերոյթ կու տաս, կանչէ աղքատներն ու խեղանդամները, կաղերն ու կոյրերը եւ այն ատեն երանելի պիտի ըլլաս, որովհետեւ անոնք փոխարէնը քեզի հատուցանելիք ոչինչ ունին: Եւ գիտցած եղիր, որ քու հատուցումդ պիտի ստանաս արդարներու յարութեան ժամանակ:

Երբ սեղանակիցներէն մէկը այս խօսքերը լսեց, ըսաւ Յիսուսի. “Երանի՛ անոր որ Աստուծոյ արքայութեան մէջ ճաշ պիտի ուտէ”:

We ought always to thank God for you, brothers, and rightly so, because your faith is growing more and more, and the love every one of you has for each other is increasing. Therefore, among God's churches we boast about your perseverance and faith in all the persecutions and trials you are enduring.

All this is evidence that God's judgment is right, and as a result you will be counted worthy of the kingdom of God, for which you are suffering. God is just: He will pay back trouble to those who trouble you and give relief to you who are troubled, and to us as well. This will happen when the Lord Jesus is revealed from heaven in blazing fire with his powerful angels.

He will punish those who do not know God and do not obey the gospel of our Lord Jesus. They will be punished with everlasting destruction and shut out from the presence of the Lord and from the majesty of his power on the day he comes to be glorified in his holy people and to be marveled at among all those who have believed. This includes you, because you believed our testimony to you.

LUKE 14:12-15

Then Jesus said to his host, "When you give a luncheon or dinner, do not invite your friends, your brothers or relatives, or your rich neighbors; if you do, they may invite you back and so you will be repaid. But when you give a banquet, invite the poor, the crippled, the lame, the blind, and you will be blessed. Although they cannot repay you, you will be repaid at the resurrection of the righteous."

When one of those at the table with him heard this, he said to Jesus, “Blessed is the man who will eat at the feast in the kingdom of God.”



2023 & 2024 Membership Dues – Parishioners who have not paid their 2023 Annual Membership dues are encouraged to remit payment. 2024 Membership Dues are also accepted now. The membership fees are \$150.00 per adult and \$50.00 for each full time student ages 18-26. These dues are 100 percent tax deductible.



2024 FEASTS

November 30 Saint Thaddeus and Saint Bartholomew
December 14 Saint Hagop (James) of Nisibis
December 23 Saints David the Prophet & Holy Apostle James
December 24 Saint Stephen the Protomartyr
December 26 Saints Peter and Saint Paul
December 28 The Holy Apostle James & John the Evangelist



*** *PLEASE NOTE* ***

Sunday, December 8, 2024, Der Hayr will be on vacation. There will be a deacon service on this day. And there will not be any Hokehankisd service on this day.

**Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ո Յ Ց
Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ**

Յ Ո Ւ Ն Ո Ւ Ա Ր 2025

**Ճ Ր Ա Գ Ա Լ Ո Յ Ց
Կիրակի, 5 Յունուար, 2025**

Առաւօտեան Ժամերգութիւն.....10:30-ին
Երեկոյեան Ժամերգութիւն.....6:30-ին
Ս. Պատարագ.....7:30-ին

**Ս. ԾՆՈՒՆԴԻ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԻՒՆ
Երկուշաբթի, 6 Յունուար, 2025**

Առաւօտեան Ժամերգութիւն.....10:00-ին
Ս. Պատարագ.....10:30-ին
Ջրօրհնէք12:30-ին
Կնքահայր – Փոքրիկն Անթո Կարապետ

✠ ✠ ✠

Տ Ն Օ Ր Հ Ն Է Ք

Անոնք, որոնք կը փափաքին Ս. Ծննդեան Տօնին առիթով
իրենց բնակարանները օրհնել տալ,
բող բարեհաճին հեռաձայնել գրասենեակ
(301) 229-8742

Տէր ՀԱՅՐՆ ՈՒ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆԸ
ԿԸ ՇՆՈՐՀԱԻՈՐԵՆ ՁԵՐ ՆՈՐ ՏԱՐԻՆ ՈՒ Ս. ԾՆՈՒՆԴԸ
ԵՒ ՁԵՋԻ ԿԸ ՄԱՂԹԵՆ
ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ ԵՒ ԵՐՋԱՆԻԿ ՏԱՐԻՆԵՐ

**CALENDAR FOR
ARMENIAN CHRISTMAS AND EPIPHANY**

JANUARY 2025

**ARMENIAN CHRISTMAS EVE
Sunday, January 5, 2025**

Morning Hour Service.....10:30 a.m.
Evening Service.....6:30 p.m.
Divine Liturgy7:30 p.m.

**ARMENIAN CHRISTMAS & EPIPHANY
Monday, January 6, 2025**

Morning Hour Service.....10:00 a.m.
Divine Liturgy.....10:30 a.m.
Blessing of the Water.....12:30 p.m.
Godfather – Anto Garabet

✠ ✠ ✠

HOME BLESSING

All parishioners who wish to have their homes blessed
on the occasion of Christmas
should call the Church Office to make arrangements
(301) 229-8742

**DER HAYR AND THE BOARD OF TRUSTEES WISH OUR
PARISHIONERS A HAPPY NEW YEAR AND MERRY
ARMENIAN CHRISTMAS FOR HEALTHY AND JOYOUS
YEARS AHEAD**